**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-3**

ք.Երևան «30 » « 11 » 2018թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, (գործելով Հայաստանի Հանրապետության անունից), ի դեմս ծառայության պետ Ա.Մխոյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Դանիելյանի (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 27.04.2018թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-3 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.8 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների թվաքանակը, կապված համաներման հետ, էական նվազել է, Գնորդի նախաձեռնությամբ կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով, նախատեսված՝ 4-րդ եռամսյակի ընթացքում, մատակարարման ենթակա 5000 կգ «սիսեռ, ամբողջական» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 3000 կգ, որի գումարը կազմում է՝ 1736640 (մեկ միլիոն յոթ հարյուր երեսունվեց հազար վեց հարյուր քառասուն) ՀՀ դրամ, քանի որ նշված քանակի չափով վերացել է «սիսեռ, ամբողջական» ապրանքատեսակի գնման պահանջը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կատարել ֆինանսական հատկացումների նվազեցում և այդ գումարի չափով նվազեցնել Պայմանագրի գինը:

1.2 Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Պայմանագրի գինը կազմում է 50865960 (հիսուն միլիոն ութ հարյուր վաթսունհինգ հազար ինը հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

1.3 Պայմանագրի N1 հավելվածի՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի, 6-րդ չափաբաժնի սյունակը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

1.4 Պայմանագրի N2 հավելվածը՝ «վճարման ժամանակացույց»-ը, հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N2-ի:

## 2. Այլ պայմաներ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-3 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 և N2 հավելվածները կազմված են 5 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 և N2 հավելվածները, համարվում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
Ծառայության պետ՝
Ա. Մխոյան

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ
ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 27/6
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930053040790100
ՀՎՀՀ 00886056
Տնօրեն՝
Ա. Դանիելյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 1*
*« 30 » « 11 » 2018 թ. կնքված*
*N 2 Համաձայնագրի*
*N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-3 ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ 6-ՐԴ ՉԱՓԱԲԱԺԻՆ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման հասցեն | մատակարարման ենթակա քանակը | մատակարարման ժամկետը |
| 6 | 15331152/1 | սիսեռ, ամբողջական | գյուղմթերք ՀՀ | Սիսեռ սերտիֆիկացված ՀUS-ով կամ ԳOUS-ով, համասեռ, մաքուր, չոր խոնավությունը ՝ (N14,0-20,0) % ոչ ավելի: Փաթեթավորումը գործարանային 25-50 կգ պարկերով: Պատրաստման և պահպանման ժամկետը նշված լինի պարկի վրա: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս, քան 80%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ «Պարենային հումքի և սննդամթերքի անվտանգությանը և սննդային արժեքին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-4.9-01-2010 նորմատիվները հաստատելու մասին» ՀՀ | կգ | 578.88 | 6946560 | 12000 | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հիմնարկներ՝ համաձայն բաշխման ցուցակի | 12000 | 2018թ. 2-րդ եռամսյակ 5000 կգ, 3-րդ եռամսյակ 5000 կգ, 4-րդ եռամսյակ 2000 կգ, եռամսյակների ընթացքում, ոչ ուշ մինչ 15.12.2018թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | առողջապահության նախարարի հրամանի և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածների: | | | | | | | |

**ԳՆՈՐԴ**
ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474534
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ՝
Ա.Մխոյան

---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ
ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 27/6
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930053040790100
ՀՎՀՀ 00886056

Տնօրեն՝
Ա. Դանիելյան

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*«30» «11» 2018 թ. կնքված*
*N 2 Համաձայնագրի*
*N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-3 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում | | | | |
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | ընդամենը |
| 1 | 15111110/1 | տավարի միս, տեղական ոսկրոտ | - | 6587910 | 19763730 | 43919400 | 43919400 |
| 6 | 15331152/1 | սիսեռ, ամբողջական | - | 2894400 | 5788800 | 6946560 | 6946560 |
| | Ընդամենը | | | | | | 50865960 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474534
ՀՎՀՀ 02204739
Ծառայության պետ՝
Ա.Մխոյան
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ
ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 27/6
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930053040790100
ՀՎՀՀ 00886056
Տնօրեն՝
Ա. Դանիելյան
/ստորագրություն/
Կ.Տ